ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

7 փետրվարի 2020թ.

Նախագահ Կ.Հ. Հովսեփյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի անդամները :

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ Իմ բգ գիտխորհրդի կազմում փոփոխությունների մասին

2. 2019-20թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի և ստուգարքային շրջանի ամփոփում:

3. Ուսումնական խորհրդատուների և ԿԾ պատասխանատուների հաշվետություն :

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Կ.Հովսեփյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Կ.Հ.Հովսեփյանը:

1. ԼՍԵՑԻՆ- **ԵՊՀ Իմ բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի կազմում փոփոխությունների մասին**

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Կ.Հովսեփյանը: Նա ներկայացրեց, որ հրաժարվում է բագիտական ֆակուլտետի գիտխորհրդի նախագահի պարտականություններից և առաջարկում է ֆ.մ,գ.թ., դոցենտ Մ.Ա.Զաքարյանի թեկնածությունը: ֆ.մ,գ.թ., դոցենտ Մ.Ա.Զաքարյանը մինչ

Գրմանիա մեկնելը եղել է բագիտական ֆակուլտետի դեկան, գիտխորհրդի նախագահ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Հովակիմյանը, Ք.Օթարյանը, Գ.Սիմոնյանը:

Արտահայտվողները ներկայացրեցին, որ լավ են գնահատում Մ.Ա.Զաքարյանի նախկինում կատարած աշխատանքները և առաջարկեցին ֆ.մ,գ.թ., դոցենտ Մ.Ա.Զաքարյանին առաջադրել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԵՊՀ Իջևանի մասն աճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ ընտրել ֆ.մ,գ.թ., դոցենտ Մ.Ա.Զաքարյանին:

2.ԼՍԵՑԻՆ-**2019-20թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի և ստուգարքային շրջանի ամփոփում:**

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Կ.Հովսեփյանը ներկայացրեց, որ **քննաշրջանը անցել է ըստ հաստատված գրաֆիկի և ներկայացրեց ստուգման և քննությունների ամփոփ տեղեկագիրը:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա.Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը:

Ա.Հովակիմյանը նշեց,որ ամենաբարձր միջին գնահատականը գրանցվել է ԻԿՄ IV<<Թարգմանության տեսություն>> առարկայից՝ 2.53 (դասախոս Մ.Ճաղարյան), իսկ ամենացածր միջին գնահատականը՝1.50 գրանցվել է ԻԿՄ II <<Տվյալների կառուցվածքներ>>առարկայից (դասախոս Կ.Դարբինյան), առանց եզրափակիչ քննության առարկաներ:

29.01.2020թ.կայացավ ԻԿՄ IV ուսանողների կուրսային աշխատանքների պաշտպանությունը, բոլոր ուսանողները պատրաստ էին:

Քննաշրջանի ընթացքում ուսանողների կողմից դժգոհություններ և բողոքներ չեն եղել:

Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ ՔԿԳ III կուրսում հինգ ուսանողներից անբավարար գնահատական է ստացել մեկ ուսանող, ևս մեկ ուսանող գերազանցիկ է, իսկ չորրորդ կուրսում 15 ուսանողներից անբավարար գնահատականներ են ստացել 3 ուսանող, մեկ ուսանող գերազանցիկ է:

3.ԼՍԵՑԻՆ - Ուսումնական խորհրդատուների և ԿԾ պատասխանատուների հաշվետություն :

Ա. Հովակիմյանը ներկայցրեց, որ **ԻԿՄ կրթական ծրագրում ծրագրավորման C# լեզուն փոխարինվել է Java լեզվով:**

ՈՐՈՇԵՑԻՆ- Կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ՆԱԽԱԳԱՀ Կ.Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ